



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

09 հուլիսի 2018թ. N 44-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009Թ. ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 62-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՅԻՆ

Ղեկավարվելով <Նորմատիվ իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի <Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին> թիվ 1066-Ն որոշման 2-րդ կետը՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ մ եմ

1. Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- Վ. Ղալումյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետ
- Ա. Նազարյան - Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
- Վ. Սուքոյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Դ. Խառատյան - ՀՀ բնապահպանության նախարարության պետական տեսչության Տավուշի մարզի տարածքային բաժնի գլխավոր տեսուչ
- Զ. Մարդանյան - ԳՋՄ Տավուշի մարզային կառույցի ղեկավար
- Գ. Գասպարյան - ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի <Տավուշ> ԶՕ-ի <Իջևան-Ուտիք> տեղամասի պետ
- Համապատասխան համայնքի ղեկավար (համաձայնությամբ) համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետ (համաձայնությամբ)

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2009թ. նոյեմբերի 2-ի <Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին> N 62-Ա կարգադրությունը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

7/9/2018

X 
_____ 

09 հուլիսի 2018թ.
ք. Իջևան